Պարոն/Տիկին Գ. Սարգսյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

_____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

_____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ.Մեսրոպյան _____

«30» 06 2025թ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Մեսրոպյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**

- Կամո Սարգսյան,
- Արթուր Սաֆարյան,
- Զարուհի Ստեփանյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- հանձնաժողովի անդամ,
- հանձնաժողովի գլխավոր քարտուղար,
- միջազգային համագործակցության բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի հունիս 18-20-ը, Հունաստանի քաղաք Աթենք:

4. Հրավիրող կողմը՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիա (WAREG):

5. Գործուղման նպատակը՝ Մասնակցել Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի 35-րդ լիագումար նիստին:

6. Քննարկված թեմաները՝ Ջրի եվրոպական կարգավորողների ասոցիացիայի հերթական լիագումր նիստի ընթացքում քննարկվեցին ասոցիացիայի անդամների համար

ընդհանուր հետաքրքրություն հանդիսացող թեմաներ, ինչպես նաև ասոցիացիայի գործունեությանը և բյուջեին առնչվող մի շարք հարցեր:

Մասնավորապես, հյուրընկալող կողմի՝ Հունաստանի ազգային կարգավորող մարմնի (RAAEY) նախագահը ներկայացրեց իրենց կարգավորող մարմնի գործառույթների շրջանակը: Նշվեց, որ, քանի որ Հունաստանը հասդիսանում է սակավաջուր երկիր, հաճախ են առաջանում իրավիճակներ, երբ բնակչությունը ունենում է ջրամատակարարման խնդիրներ: Ազգային կարգավորող մարմինը, իր գործունեության շրջանակում, համագործակցում է այլ պետական մարմինների հետ՝ այդ թվում ուժային կառույցների, որոնք արտակարգ իրավիճակների ժամանակ աջակցում են ջրամատակարարման խնդիրների լուծման հարցում:

Ասոցիացիայի շրջանակում ներկայումս գործում են չորս աշխատանքային խմբեր՝ գործունեության առանցքային ցուցանիշների, կեղտաջրերի մաքրման, խմելու ջրի կանոնկարգի, ինչպես նաև սակագների հարցերով աշխատանքային խմբերը:

Յուրաքանչյուր աշխատանքային խումբ ներկայացրեց իր անդամների կողմից իրականացրած գործունեությունը և վերլուծությունները: Խմելու ջրի կանոնկարգի և սակագների հարցերով աշխատանքային խմբերը համեմատաբար վերջերս են կազմավորվել, որի արդյունքում ներկայումս դեռևս ոչ բոլոր երկրների ներկայացուցիչներն են անդամկցում այդ խմբերին:

Քննարկվեց ջրային համակարգի կայունության հարցը, որի մասով Պորտուգալիայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը խոսեց ապրիլ ամսին Իբերիայի թերակղզում՝ Պորտուգալիայիում, Իսպանիայում և Ֆրանսիայի հարավում էլեկտրաէներգիայի անջատումից, որը տևել էր շուրջ 12 ժամ և ազդել էր բոլոր հանրային ծառայությունների, այդ թվում՝ ջրի և հեռահաղորդակցության խափանմանը: Այս առնչությամբ յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ խոսեց իրենց կարգավորող մարմնի փորձից: Հանձնաժողովի կողմից ներկայացվեցին ջրամատակարարման խնդիրների դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող քայլերը:

Ներկայացվեց WAREG-ի 2024 թվականի բյուջեն: Մանսավորապես, նշվեց, որ կազմակերպությունը գոյատևում է միայն անդամակցության վճարների հաշվին, ինչի արդյունքում, չճարելու պարագայում, առաջանում են որոշակի խնդիրներ: Ներկայացվեցին WAREG-ի գրասենյակի պահպանման ծախսերը՝ աշխատակիցների

աշխատավարձ, ադմինիստրատիվ ծախսեր, պրոյեկտների իրականացման ուղղությամբ իրականացվող ծախսեր: Ընդ որում նշվեց, որ WAREG-ը ներկայումս ունի երկու գրասենյակ՝ Բրյուսելում և Միլանում: 2024 թվականին աշխատակազմի թիվը պակասել է, որի արդյունքում հնարավոր է եղել որոշակի խնայողություններ կատարել:

Այս համատեքստում, հաշվի առնելով WAREG-ի գրասենյակի պահպանման ծախսերի հնարավոր աճը, առաջարկվեց 2026-2028 թվականների բյուջեում նախատեսել անդամակցության վճարների որոշակի աճ, որը թույլ կտա ապահովել գրասենյակի ծախսերը: Այսպես, հանձնաժողովը, որը 2023-2025 թվականներին վճարել է 2042 եվրո, որպես ջրային ոլորտից համեմատաբար քիչ կարգավորման վճար ունեցող մարմին (2024 թվականին այն կազմել է շուրջ 60000 եվրո), 2026-2028 թվականների բյուջեով պետք է վճարի 2125 եվրո: Անդամկացության վճարները տարբերվում են ըստ ջրային ոլորտից հավաքագրված կարգավորման վճարների մեծության:

Նշվեց նաև, որ որոշ անդամներ՝ Իտալիան, Իսպանիան, Ֆրանսիան կատարում են նվիրատվություններ, որոնք ուղղվում են ինչպես գրասնյակի պահպանման ծախսերին, այնպես էլ տարբեր ծրագրերի իրականցմանը, որի արդյունքում WAREG քարտուղարության աշխատակիցների՝ հանդիպումներին մասնակցության ծախսերը հնարավոր է լինում իրականացնել նշված գումարներից:

Քննարկվեցին նաև հետագա հանդիպումները: Մանսավորապես, նշվեց որ հաջորդ հանդիպումը տեղի կունենա 2025 թվականի դեկտեմբերի 3-4 Բրյուսելում:

Միևնույն ժամանակ, 2026 թվականի հադնիպումների մասով, հանձնաժողովը ներկայացրեց իր առաջարկը հյուրընկալել հանդիպում Երևանում 2026 թվականի ապրիլի 8-9-ը, ողջունվեց ասոցիացիայի ղեկավար կազմի և քարտուղարության կողմից

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպումներ են կայացել ասոցիացիայի անդամ հանդիսացող երկրների պատվիրակների հետ, ինչպես նաև ասոցիացիայի քարտուղարության հետ՝ Երևանում կայանալիք հանդիպման մանրամասները քննարկելու նպատակով: Հանդիպման ընթացքում քննարկված նյութերը հասանլի են հետևյալ հղմամբ՝ https://www.wareg.org/35th-general-assembly-athens/:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ժամանակ հանձնաժողովը առաջարկեց 2026 թվականի ապրիլ ամսին հյուրընկալել ասոցիացիայի լիսագումար նիստը Երևան քաղաքում, որի համատեքստում հանձնաժողովը

աշխատանքային կարգով կքննարկի նիստի անցկացման մանրամասները ասոցիացիայի ներկայացուցիչների հետ:

Կամո Սարգսյան ---------- 24.06.25թ.
(ստորագրությունը, ամսաթիվը)

Արթուր Սաֆարյան ---------- 23.06.25թ.
(ստորագրությունը, ամսաթիվը)

Զարուհի Ստեփնայնա ---------- 24.06.25թ.
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման
Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 456-ՀՆ, 454-ԳՔ 09.06.2025թ**

3. ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի նախագահի խորհրդական՝ Կամո Սարգսյան,

հանձնաժողովի գլխավոր քարտուղար՝ Արթուր Սաֆարյան,

հանձնաժողովի միջազգային համագործակցության բաժնի պետ՝ Զարուհի Ստեփանյան

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Աթենք **/Հունաստան /**

5. Գործուղման ժամկետները **17.06.2025-21.06.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)**

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կամո Սարգսյան	Արթուր Սաֆարյան	Զարուհի Ստեփանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս)	9,588	8,865	9,588	28.041
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	191,759	177,297	191,759	560.815
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	163	163	163	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	72,907	72,907	72,907	
	Օրերի քանակը	4	4	4	
	Ընդամենը (դրամ) հաշիվ հյուրանոցից	291,627	291,627	291,627	874.881
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)	61	61	61	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	26,725.3	26,725.3	26,725.3	
	Օրերի քանակը	5	5	5	
	Ընդամենը (դրամ)	133,627	133,627	133,627	400.881
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար				-
	Այլ ծախսեր (ճանապարհածախս՝օդանավակայանից հյուրանոց)	22,547			22.547
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		649,148	611,416	626,601	1,887.165

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,
(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ **24.06.2025թ.**